

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2020 թվականին Սյունիքի մարզպետարան մուտք գործած և առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2020 թվականին մարզպետարան է մուտքագրվել՝ 11950 թղթակցություն, առաքվել՝ 7714 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ նախագահի աշխատակազմից՝ 6, ՀՀ Ազգային ժողովից՝ 28, ՀՀ պետական վերահսկողության ծառայությունից՝ 2, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից՝ 6, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 589, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 1216, հանրապետական գործադիր մարմիններից և գերատեսչություններից՝ 1401, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 2565, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 4037, գաղտնի թղթակցություն՝ 319, քաղաքացիներից՝ 1781 դիմում: ՀՀ Սյունիքի մարզպետարան է վերահասցեագրվել 417 դիմում, որից՝ ՀՀ Ազգային ժողովից՝ 11, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 248, ՀՀ նախագահի աշխատակազմից՝ 2, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից՝ 4, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 53, հանրապետական գործադիր մարմիններից՝ 99 դիմում:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2020թ. կատարվել է 47 քաղաքացիների ընդունելություն: Որոշ ամիսներ ընդունելություն չի կազմակերպվել, կապված երկրում համավարակի և ռազմական դրության հետ:

Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ ու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: